ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2019 թվականի հուլիսի 3-ի N 4 - Լ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված ''Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան'' հիմնադրամի կանոնադրության 48-րդ կետի 14-րդ ենթակետով, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017թ. նոյեմբերի 7-ի թիվ 1282-Ն հրամանով հաստատված ''ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգի'' 25-րդ կետով, ՀՊՄՀ գիտական խորհրդի 2018թ. սեպտեմբերի 26-ի թիվ 1 նիստուվ հաստատված ՀՊՄՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի 36-րդ կետով և լսելով Համալսարանի 2018-2019 ուս.տարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման քննությունների մասին (զեկ.՝ պրոռեկտոր Միեր Մելիք-Բախշյան)՝

Գիտական խորհուրդը որոշում է.

Հանձնարարել համալսարանի ֆակուլտետների դեկաններին և ամբիոնների վարիչներին.

1. Ֆակուլտետների խորհուրդներում և ամբիոնների նիստերում քննարկել հանձնաժողովների նախագահների կողմից արված առաջարկություններն ու դիտողություններ:
2. Մինչև ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունը ամբիոնների նիստերում քննարկման առարկա դարձնել թեզերի ղեկավարների հաղորդումները շրջանավարտների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ: Պաշտպանության երաշխավորել միայն համապատասխան մակարդակ ունեցող աշխատանքները:
3. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմանները հաստատելիս հաշվի առնել դրանց արդիականությունը և բացառել տարեց տարի կրկնվող թեմաները:
4. Մասնագիտական առարկաների շրջանակներում մշակել և ներդնել հատուկ դասընթաց գիտական ապարատի վերաբերյալ:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ